«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ, ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/04-6»

ք. Երևան

«12» մարտի 2021թ.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Աղայանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեգա Էներգո»-ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3218700/երեք միլոն երկու հարյուր տասնութ հազար յոթ հարյուր/ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	«Մեգա Էներգո» ՍՊԸ-ն
ՀՀ, ք. Երևան, Փ.Բյուզանդի 1/3, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք	ՀՀ, ք. Երևան, ԴԱՎԻԹԱՇԵՆ 4 ԹՂՄ. 32/4
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ	Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205022563241001	Հ/Հ՝ 1570027038800100
ՀՎՀՀ՝ 02819226	ՀՎՀՀ՝ 00170838
Էլ. Հասցե՝ gnumner.kanach@yerevan.am	**Էլ. Հասցե՝** erodavllc@gmail.com
Տնօրեն՝	**Տնօրեն՝**
Ս.Սոսյան	***Դ. Մնացականյան***
/ստորագրություն/Կ.Տ	***/ստորագրություն/Կ.Տ***

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 12 » մարտի 2021թ. կնքված
N «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/04-6» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ենթակա քանակը	Ժամկետը*** հասցեն
8	31321251/2	հաղորդալար 3	ՊՎ3 ԻՆ ՎԻ	Հաղորդալար պղնձյա 1*25մմ2, բազմաջիղ ՊՎ-3 600Վ, սև կամ շականակագույն, պատված պոլիէթիլենային հերմետիկ պատյանով	մ	360	36000	100	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
9	31321251/3	հաղորդալար 4	ՊՎ3 ԻՆ ՎԻ	Հաղորդալար պղնձյա 1*35մմ2, բազմաջիղ ՊՎ-3 600Վ, սև կամ շականակագույն, պատված պոլիէթիլենային հերմետիկ պատյանով	մ	1560	156000	100	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
12	31711110	ինքնասոսնձվող պահոց	EKF	Ինքնասոսնձվող պահոց (20x20 մմ) սպիտակ, նեյլոնի կապիչների համար: Տուփը 100 հատ plc-20x20	տուփ	1500	15000	10	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
13	31711110/1	պարույրաձև ժապավեն	EKF	Պարույրաձև ժապավեն հաղորդալարերը փնջաձև կապելու համար D6мм d4мм տուփը 10մ:	տուփ	900	9000	10	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20

										օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
18	44322530/2	ծայրակալ 2	EKF	Ծայրակալ տափօղակով ալյումինե ТА 35-10-8 տիպի, 35մմ2 մալուխի համար	հատ	120	12000	100	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
19	44322530/3	ծայրակալ 3	EKF	Ծայրակալ տափօղակով պղնձե անագապատ ТМЛ 35-8-9 տիպի, 35մմ2 մալուխի համար	հատ	270	27000	100	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
21	44322530/5	ծայրակալ 5	EKF	Ծայրակալ 25մմ2 НШвИ 25,0-16 տիպի, պղնձե մալուխի համար տուփ 50 հատ nhvi-25.0-16	տուփ	1800	18000	10	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
25	44322530/9	ծայրակալ 9	EKF	Ծայրակալ տափօղակով մեկուսիչով 6մմ2 НКИ 6.0-8 տիպի, տուփ 50հատ nki-5.5-8n	տուփ	2400	12000	5	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
26	44322530/10	ծայրակալ 10	EKF	Ծայրակալ տափօղակով մեկուսիչով 6մմ2 НКИ 6.0-6 տիպի, տուփ 50հատ nki-5.5-6n	տուփ	1800	18000	10	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /

30	31211180/1	ավտոմատ անջատիչ 2	EKF	Ավտոմատ անջատիչ BA 47-63 4.5 kA 16 A C կարգի, մեկ բևեռ, նոմինալ լարման հզորությունը - 230V AC 50Hz, նոմինալ հոսանքի ուժը 16Ա, ГОСТ Р50345-2010 - համապատասխան	հատ	600	24000	40	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
31	31221100/1	էլեկտրոն ային ռելե	EKF	MPR-200 տիպի, ասինխրոն շարժիչների պաշտպանության էլեկտրոնային ռելե, նախատեսված է եռաֆազ ասինխրոն էլեկտրական շարժիչների շարունակական վերահսկողության և պաշտպանության համար ծանրաբեռնվածությունից, բեռի ասիմետրիայից, ֆազերի բացակայությունից: 40-200A միջակայքում սեղմակով ղեկավարելու համար, ազդանշանային փոխարկիչ կոնտակտով: mpr-200 երաշխիքը 1 տարի ունենա ԵԱՏՄ հավաստագիր (сертификат)	հատ	34500	1380000	40	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
36	31711110/3	Էլեկտրամ ագնիսակ ան գործարկի չ	КЭАЗ	ПМЛ-5160ДМ տիպի էլեկտրամագնիսական գործարկիչ, օգտագործման կատեգորիաներ AC-3, ուժային կոնտակտների լարման հզորությունը - 380V AC 50Hz, հոսանքի ուժը 100A, Կառավարման կոճի նոմինալ լարումը - 220 V AC, օժանդակ կոնտակտների միացում - 1 բաց և 1 փակ, Ուժային կոնտակտների քանակը 3 պաշտպանության աստիճան IP20, կլիմայական կատարում, գործարկում УХЛ4,	հատ	25200	630000	25	25	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /

				երաշխիքը 1 տարի ունենա ԵԱՏՄ հավաստագիր (сертификат)						
38	31211180/3	ավտոմատ անջատիչ 4	EKF	Ավտոմատ անջատիչ BA-99 250 տիպի նոմինալ հոսանքի ուժը -200A', Փոփոխական հոսանքի կարճ միացման հ.ուժի նոմինալ հզորությունը Icu (kA)35, 3 բևեռ, ուժային կոնտակտների լարման հզորությունը - 400V AC, mccb99-250-200 կամ փոխարինողը երաշխիքը 1 տարի ունենա ԵԱՏՄ հավաստագիր (сертификат)	հատ	20250	405000	20	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
39	44322530/12	տերմինալ	EKF	KCB տիպի տերմինալ նախատեսված է 16-95մմ2 պղնձի և ալյումինի հաղորդալարերի միացման համար: DIN չորսուի վրա տեղադրման համար, ապահովում է պղնձի եւ ալյումինե հաղորդիչների անվտանգ միացումը: Նոմինալ հոսանքի ուժը 245A kvs-16-95	հատ	1650	33000	20	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
41	31211100/1	մետաղակ ան էլեկտրակ ան վահան	EKF	ՍՄՊ տիպի մետաղական էլ. վահան, IP31 պաշտպանության աստիճանի, զոդված մետաղական կոնստրուկցիա է շարժական մոնտաժային վահանակով, ինչը հեշտացնում է սարքավորումների տեղադրումը	հատ	38400	384000	10	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում

				հանված դիրքում: Նախատեսված է ղեկավարման կամ բաշխիչ էլեկտրական վահանակներ հավաքելու համար,որը ծառայում է հսկողության, մուտքագրման և բաշխման, տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացմանը: Դրանք թույլ են տալիս տեղադրել ինչպես մոդուլային, այնպես էլ սովորական սարքավորումներ: Պարտադիր փոշեներկված: նյութը ՝ պողպատ չափերը՝ լայնությունը (մմ) 650 բարձրությունը (մմ) 800 խորությունը (մմ) 250						/ ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
47	31211100/2	մետաղական էլեկտրական վահան	ԿԷԱՁ	ՍՄՊ տիպի մետաղական էլ. վահան, IP31 պաշտպանության աստիճանի, զոդված մետաղական կոնստրուկցիա է շարժական մոնտաժային վահանակով, ինչը հեշտացնում է սարքավորումների տեղադրումը հանված դիրքում: Նախատեսված է ղեկավարման կամ բաշխիչ էլեկտրական վահանակներ հավաքելու համար, հսկողության, մուտքագրման և բաշխման, տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացմանը: Դրանք թույլ են տալիս տեղադրել ինչպես մոդուլային, այնպես էլ սովորական սարքավորումներ: Պարտադիր փոշեներկված: Նյութը՝ պողպատ	հատ	2100	10500	5	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /

				չափերը՝ լայնությունը (մմ)՝ 210 Բարձրությունը (մմ)՝ 300 խորությունը (մմ)՝ 150						
48	44322550/2	սեղմակալ	EKF	Սեղմակալ՝ չմեկուսացված ծայրակալների ճզման համար: Ապրանքի մոդելը PC-35M Կտրվածքի միջակայք ՝պղնձե ճարմանդներ 10-35 մմ 2 3-դիրքով սեղմող ծնոտներ ցանկացած տիպի ծայրակալների մամլում Սեպաձև սեղմվածք Գործիքը նախատեսված է միաջիղ և բազմաջիղ հաղորդիչների ծայրակալները սեղմելու համար Էրգոնոմիկ բռնակներ Քաշ ՝ 655 գ Երկարությունը ՝ 330 մմ	հատ	18000	18000	1	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
49	44322530/13	միացման գլան 1	EKF	Անագեպատ պղնձե GTY-16-6 Նոմինալ հոսանք A 80, Լարում մինչև 35 կՎ, նոմինալ լայնական կտրվածքը (поперечное сечение) (միջակայք) մմ² -16 ... 16	հատ	160	2400	15	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
50	44322530/14	միացման գլան 2	EKF	Անագեպատ պղնձե GTY-25-8 նոմինալ հոսանք 115 A, լարումը մինչև	հատ	200	3000	15	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

				35 կՎ, նոմինալ լայնական կտրվածքը (поперечное сечение) (միջակայք) 25 մմ²						հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
51	44322530/15	միացման գլան 3	EKF	Անագապատ պղնձե GTY-35-9, նոմինալ հոսանք 135 A, լարումը մինչև 35 կՎ, նոմինալ լայնական կտրվածքը (поперечное сечение) (միջակայք), 35 ... 35 մմ²:	հատ	320	4800	15	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
52	44322530/16	միացման գլան 4	EKF	Անագապատ պղնձե GTY-50-11, նոմինալ հոսանք 175 A, Լարումը մինչև 35 կՎ, նոմինալ լայնական կտրվածքը (поперечное сечение) (միջակայք), 50 ... 50 մմ²	հատ	440	6600	15	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
53	44322530/17	միացման գլան 5	EKF	Անագապատ պղնձե GTY-70-13, նոմինալ հոսանք 215 A, Լարումը - Մինչև 35 կՎ, նոմինալ լայնական կտրվածքը (поперечное сечение) (միջակայք) 70 ... 70 մմ²	հատ	640	9600	15	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
54	31711110/8	ջերմային նստեցման խողովակ	EKF	Ջերմային նեղացման խողովակ սոսինձի շերտով և նեղացման գործակցով **4:1,** ТТК (4:1)-24/6, **օպտիմալ նստեցման չափը (մմ)** - 21.6 - 7.2, երկարությունը 1.2մ	հատ	750	3000	4	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /
55	31711110/9	ջերմային նստեցման խողովակ	EKF	Ջերմային նեղացման խողովակ սոսինձի շերտով և նեղացման գործակցով **4:1,** ТТК (4:1)-16/4, **օպտիմալ նստեցման չափը (մմ** 14.4 - 4.8, երկարությունը 1.2մ	հատ	300	1200	4	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /

56	31711110/10	ջերմային նստեցման խողովակ	EKF	Ջերմային նեղացման խողովակ սոսինձի շերտով և նեղացման գործակցով **4:1,** ТТК (4:1)-12/3, **օպտիմալ նստեցման չափը (մմ** 10.8 -3.6,երկարությունը 1.2մ	հատ	150	600	4	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում / ՀՀ, Ք.Երևան, Շիրազի փ. 4 /

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

1. ***Վաճառողը Գնորդին պետք է ներկայացնի նաև որակի համապատասխանության սերտիֆիկատ բոլոր չափաբաժինների համար:***
2. ***Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է վաճառողը իր միջոցների հաշվին:***

ԳՆՈՐԴ
«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Փ.Բյուզանդի 1/3,
Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205022563241001
ՀՎՀՀ՝ 02819226
Էլ. Հասցե՝ gnumner.kanach@yerevan.am
Տնօրեն՝

Ա.Աղայան
/ստորագրություն/Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեգա Էներգո» ՍՊԸ-ն
ՀՀ, ք. Երևան, ԴԱՎԻԹԱՇԵՆ 4 ԹՂՄ. 32/4
Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027038800100
ՀՎՀՀ՝ 00170838
Էլ. Հասցե՝ erodavllc@gmail.com
Տնօրեն՝

Դ. Մնացականյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
«12» մարտի 2021թ. կնքված
N «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/04-6» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
8	31321251/2	հաղորդալար 3		36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000
9	31321251/3	հաղորդալար 4		156000	156000	156000	156000	156000	156000	156000	156000	156000	156000	156000	156000
11	44322530	Գլանդ		60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000
12	31711110	ինքնասոնձվող պահոց		15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000

| | | |

38	31211180/3	ավտոմատ անջատիչ 4		405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000	405000
39	44322530/12	տերմինալ		33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000
41	31211100/1	մետաղական էլեկտրական վահան		384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000
47	31211100/2	մետաղական էլեկտրական վահան		10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500
48	44322550/2	սեղմակալ		18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
49	44322530/13	միացման գլան 1		2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400
50	44322530/14	միացման գլան 2		3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
51	44322530/15	միացման գլան 3		4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
52	44322530/16	միացման գլան 4		6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600

53	44322530/17	միացման գլան 5		9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600
54	31711110/8	ջերմային նստեցման խողովակ		3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
55	31711110/9	ջերմային նստեցման խողովակ		1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200
56	31711110/10	ջերմային նստեցման խողովակ		600	600	600	600	600	600	600	600	600	600	600	600

ԳՆՈՐԴ
«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Փ.Բյուզանդի 1/3,
Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205022563241001
ՀՎՀՀ՝ 02819226
Էլ. հասցե՝ gnummer.kanach@yerevan.am
Տնօրեն՝

Ա.Աղայան
/ստորագրություն/Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեգա Էներգո» ՍՊԸ-ն
ՀՀ, ք. Երևան, ԴԱՎԻԹԱՇԵՆ 4 ԹՂՄ. 32/4
Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027038800100
ՀՎՀՀ՝ 00170838
Էլ. հասցե՝ erodavllc@gmail.com
Տնօրեն՝

Դ. Մնացականյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն